

## ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵԸՆՔ

Գրական կենդանութիւնն— Վիպաթերթ:— Ընթերցասկրութիւնն տարածելու միջոցներ:— Գրական տեղափոխութիւններ:— Ռուսահայ վիպագրութիւնը և նրա քննադատ-պատմաբանը:— Միակողմանի քննադատութիւնն, կուսակցական քննադատութիւնն էլեզ և տէնդէնցիա:— Մեր գրականութիւնը սպասում է անաշուր քննադատի և պատմաբանի:

Զենք կարող ասել, որ մեր գրական կեանքը մեռած էինք. ընդհակառակի վերջերս մի տեսակ առանձին աշխուժութիւն է նկատուում անգամ գլխաւորապէս հրատարակչական ասպարիզի վերալ: Ըստ սովորութեան՝ աշխարհիս զանազան անկիւններից, ուր որ հայկական գաղղութ է հաստատում, երևում են «վալը ընկնող աստղերի» նման նոր սլարերական հրատարակութիւններ. որոնք շուտ շուտ մարում են առանց երկարատե հետք թողնելու: Բայց այդպիսի ժամանակաւոր լուսատուների երևալն էլ հետաքրքրական է և միխթարական, որովհետև ցոյց են տալիս, որ մեր հեռաւոր և վտարանդի եղբայրները ապրում են ոչ միայն «հացիւ, այլ և օբանիւ Տեառն»: Դրանց մէջ շատ անգամ պարբերական հրատարակութեան նորաձեռութիւններ ու «Նոր խօսքեր» էլ ենք գտնում: Այսպէս օրինակ Վառնափի (Քուլզարիտ) նոր ամսագիր «Վիպաթերթ—Հանդէս վիպասանականը» կոչուած է բանականութիւնն տալու լատկապէս ժողովրդի ընթերցասկրութեանը և իր տեսակում հետևողութիւն է երոպական այդ տեսակ հրատարակութիւնների: Անտեղ հետաքրքրական վէպը մեծ գին ունի և մեծ ախորժակով է կարդացւում բանուորների, արհեստաւորների, մանրավաճառների և այդ տեսակ կիսակիրթ գասակարգերի շրջաններում: Ժողո-

վրդական և բուլվառական թերթերը սուրբ պարտք են համարում կերակրել իրանց ընթերցողներին զանազան խորհրդաւոր վէպերով և ալկածախնդիր պատմութիւններով։ Մեր Պօլսի թերթերն էլ դրանց, մասնաւորապէս ֆրանսիական մամուլի, ուշիմ աշակերտներն են։ Բաց արէք Պօլսական թերթերի վերջին համարները և գուք այնտեղ կգանէք ոչ թէ մէկ, այլ երկ-երկու «սարսափելի» վէպեր, որոնք, պէտք է ենթադրել, սիրով ընդունում և կարդացում են Պօլսում և նրա շուրջը։ Ալդ տեսուկ վէպերը շատ անդամ պատճառ են դաւնում թերթի ժողովրդականալուն և տարածուելուն։ Դեռ նորերս Խոտիամի մի փոքր քաղաքում ականատես եղալ հետևեալ տեսարանի՝ մեծ փողոցի վերայ, ուր անց ու դարձ էր լինում բաւականի մեծ բազմութիւն, գլխաւորապէս եկուորների գոգրիկ լրագրավաճաները բողաք էին պատռում աղաղակելով։ «Տօcolo», «Corvera del sera» և աւելացնելով Մուս-Ճապոնական պատերազմի մասին ստացուած նոր լուրերի բովանդակութիւնը։ Օրաթերթերը արագ սպառում էին «օրուայ չարիքով» հետաքրքրուող բազմութեան մէջ։ Ալդ աղմկալի փողոցից ես բարձրացալ խաղաղ քաղաքացիների և ժրաշճան արհեստաւորների և բանուորների թաղը ալսուել էլ վաճառում էին օրաթերթեր, բայց ծախողը մի ծերունի էր, որ բարձր ձախով պատմում էր թերթում ֆալուած վէպի բովանդակութեան սկիզբը և խոսանում էր շարունակութեան մէջ հազար և մէկ սարսափներ, գերմարդկային վեհանձնութիւններ և այլն և այլն։ Ալդ շարունակութիւնով հետաքրքրուողը պէտք է վճարէր հինգ չէնտէզիմի (օօտէսիմ), այսինքն երկու կոպէկից էլ պակաս և ստանար թերթը, որի բանսականում նա կգտնէ անվերջ շաղալարելի»։ «Նշապօլի գաղտնիքը» կամ «Մաֆֆիլայի սիրուհիներին»... Վառնալի վիպաթերթի բովանդակութիւնն էլ ցոլց է տալիս, որ նա ծառաւելու է բացառապէս ընթերցասիրութիւն տարածելու գործին, որ ալժմեան պայմաններում անշուշտ մեծ արժէք ունի։ Ահա ալդ թերթի առաջին և երկրորդ համարների բովանդակութիւնը՝ ա) «Մերժուած սէր», պօլսական կեանքի գրուագներ, ազգային վէպ,

գրած է Պ. Ե. Սըրմաքէշեան. բ) «Ճուածներ» և գաղտնիք Հաւատաքննութեան», հեղինակութիւն Պ. Պ. Մասփոլի և Լիոնէլի. (ալս վէպը բնաւ կապ և նմանութիւն չունի տարիներ առաջ հրատարակուած «Գաղտնիք Հաւատաքննութեան» ի հետ). գ) «Խորհրդաւորդաւա Ֆօստիւնէ տիւ Պօակօպէիս»:

Խոսք չկալ, որ մեր, Կովկասում հրատարակուող թերթերի բաժանորդները սովոր չեն ալդ տեսակ գրականութիւնն մարտելու, հարկ էլ չկալ նրան վարժեցնելու և դաստիարակելու այդ ուղղութեամբ, քանի որ կարելի է տալ նրան գեղարուեստական արժէք ունեցող վէպէր կամ հանրամատչելի գիտական երկեր և դրանցով նրա հարցասիրութիւնը զարգացնել և նրան ընթերցասիրութեան. «բացիլլը» պատուաստելի Եւ մինչդեռ դա ոչ միայն կարելի է և անհրաժեշտ է—մեր միակ ալժմուալ օրաթերթը մեռցնում է իր ընթերցողների մէջ եղած ընթերցասիրութիւնն էլ—մի կողմից խորշելով հայոց կեանքից և նրա պահանջներից, միւս կողմից—տալով անմարսելի և անբովանդակ բանասիրականներ, Դրան կասեն ի շարը գործ գնել այն մենաշնօրհը, որով նա բաղդի բերմամբ օգտւում է: Թէպէտ և դա ինքնասպանութեան ճանապարհ է, բայց թերթը ինքն իրան բարոյապէս սպանելով միւնոյն ժամանակ խոչընդուռ է դառնում անհրաժեշտ հասարակական շարժման՝ ընթերցասիրութեան: Ուստի լիովին միանում ենք «Լումայի» յայտնած ցանկութեան տեսնել գոնէ «Ճարագն» օրաթերթի վերածուած: Մեր գրական ասպարէզը կրկին երկու բանակի է բաժանուել, ասում եմ «կրկին», որովհետեւ երկու բանակների բովանդակութեան և կազմի մէջ փոփոխութիւններ եմ տեսնում: Մի կողմից «Մշակ» և «Մուրճ», որոնց սկսել են մասնակցել Յ. Ցովհաննիսեան, և ալլք. — միւս կողմից «Ճարագ» և «Լումայի», որոնց գըլիսաւոր աշխատակիցների ցանկում կարդում ենք Հիրդավանդագէի, Վ. Փափազեանի, Մուրճացանի անունները: Եթէ վերջիններիս շարքին միանան Շանթ, Նար-Դոս, Աղապեան—այն ժամանակ «Ճարագն» և «Լուման» համարձակ կարող են յայտարարել, որ իրանք «երիտասարդ

վիպագրութեան» օրգան են: Իհարկէ, պլ. Լէօն, «ա-  
զատամիտներից այդ ամենաերկար գրողը» կասի թէ-  
գրանք փթած ոյժեր են, յետադէմ և տաղանդից զուրկ,  
բայց նրան ոչ ոք, բացի «Բազմավիշտից» չի հաւատար:  
Խոկ մենք կասենք—թէ դրանք անպէտք գըողներ են,  
ինչպէս լայտարարեց այդ պլ. Լէօն «Բազմավիշտից» և նը-  
րա լաւելուածի մէջ, ապա ցոյց թող տար, որոնք են  
պէտքականները: Նրա ուղղակի անբարեխիղճ այդ յօ-  
դուածներից մենք եկանք այն միակ եզրակացութեան,  
որ նրա քննադատական կշեռքը՝ «Մշակն» է: Դա նրա-  
ձեռին մի տեսակ զրջանակ է: ով և ինչ որ մտնում է  
նրա մէջ և տեղաւորւում—լաւ է, գեղեցիկ, լառաջա-  
դէմ. իսկ եթէ ոչ—վայ նրան. «լաւ էր, որ նա չծնէր»...  
Ահա ձեզ օրինակներ և ապացոյցներ. պլ. Մուրացանը  
իր վէպում բողոքականների արարքներն է նկարագրում.  
մի ուրիշ տեղ—Գր. Արծրունուն է ծաղրում. այդ բա-  
ւական է, որ պլ. Մուրացանը տաղանդից զուրկ «պասկ-  
վիլիսանտ» անուանուի: Շիրվանզադէն «Արսէն Դիմաք-  
սեանն» է գրում. շատերը ասում են, որ դա Գր. Արծ-  
րունին է. ուրեմն պէտք էր, որ Ա. Դիմաքսեանը հան-  
ճար լինէր և ոչ թէ այն, ինչ որ դուրս է բերուած  
վէպի մէջ. ուրեմն Շիրվանզադէն «փոքրիկ տաղանդ»  
է: Վ. Փափազեանը «Եմմա» վէպի մէջ խօսում է մի  
ինչ որ «Ձայն» թերթի մասին. «Ձայնը, ասում է Լէօն,  
«Մշակն» է. այստեղ իհարկէ, ամեն ինչ ներկայացրած  
է ծաղրական կերպով»: Մենք չենք ուզում հարցնել  
թէ ինչո՞ւ «Ձայնը»—«Մշակն» է, թէ որտեղից է դուրս  
գալիս «ուրեմն» և ալլն. մեզ համար հետաքրքրականն  
այն է, որ դրա համար պլ. Վ. Փափազեանը մի լաւ կո-  
թոց է ստանում պլ. Լէօնից. էլ «զզուելի», էլ «ստոր»,  
էլ «կամէլէօն» և ալլն և ալլն: «Ուշունց է տալիս աշ-  
տարակցու նման» խօսքը կարելի է այժմ փոխել «ու-  
շունց է տալիս Լէօն նման» խօսքի:—Սակայն թող այդ  
վերոյիշեալ գրողները Գր. Արծրունուն աստուածացնէին  
վէպերի մէջ, իսկ «Մշակը» մտաւոր սնունդի աղբիւր հրա-  
չակէին—հաւատացէք, նրանք ոչ «պասկվիլանտ», ոչ  
փոքր տաղանդ» և ոչ «քամէլէօն» կլինէին. ապացոյց  
ՀՈՒՄԱՑ

ալն, որ պ. Լէօն իր «մոռսահայ վիպագրութեան» մէջ առանց քաշուելու զետեղում է հետեւեալ տողերը. «Փոքր ըիկ վէպ է Գր. Արծրունու «Հվէլինան», բայց որքան լայն եւ մեծ միտք ունի իր մէջ, որքան շատ քան է ասում: Հասարակական գաղափարի այդպիսի աստուածացում կարող էր տալ միայն Գր. Արծրունու նման գաղափարական գործիչը. «Հվէլինան» մի սիրուն առանձնութիւն է գրաւում մեր վիպագրութեան մէջ... «Հվէլինան» մի հրապարակախօսական, սիրուն վէպ է, թարմացնող ու ոգեւորող իր վերին աստիճանի համարելի, ուժեղ տենդենցիայով: Զը նայած իր գեղարուեստական պակասութիւններին, նա ՊԱՏՈՒԱՀՈՐ տեղ կունենայ հասարակական գաղափարներով սնվող մեր գրականութեան մէջ...»: Եւ այսպիսի փափոսով գրուած է Լէօնի ամբողջ լոգուածը Գր. Արծրունու, իբրև վիպասանի մասին: Եւ դա լրաց քննադատութիւն է. դրա մասին է, որ «Հանդէս Ամսօրեալի» և «Բազմավիճակի» կենսագրողները ասում են «տաղանդաւոր և անկողմնապահ քննադատ»: Որ պ. Լէօն աշխատասէր է, շատ գրելու ընդունակութիւն ունի, անխոնց կոմպիլիատոր է—ալդ ես տեսնում եմ. բայց որ նա տաղանդաւոր և անկողմնապահ քննադատ է—ես ալդ չեմ տեսնում: Արդութեան, Ս. Նազարեանցի, Գր. Արծրունու կենսագրութիւնները դեռ քննադատութիւններ չեն, և իբրև կենսագրութիւններ էլ բաւականին թոյլ են, որովհետև նրանց մէջ շատ բան առուած է, բայց գլխաւորը չի արուած՝ ալսինքն ժամանակի և անձնաւորութեան պատկերը չի տուած: Դրանք կենսագրութեան նիւթեր են, կարգով դասաւորուած: ալժմ հարկաւոր է, որ մէկ ուրիշը, տաղանդաւորը—օգտուի ալդ նիւթերից և նրանց հոգի ներշնչէ: Քննադատութիւն չէ և նրա տհագին յօդուածը (դեռ չի վերջացել) Վենետիկի օրգաններում. աւելի զուտ դա զրականութեան պատմութեան մի փորձ է: Բայց որովհետև պ. Լէօն աւելի կօմպիլիատոր է քան պատմաբան, աւելի պօլէմիստ է քան քննադատ—նրա ալդ յօդուածն էլ պօլէմիկո է իր. հակառակորդների հետ: Միջակ գեղա-

բուեստական ճաշակով, բաւակտնի վալր է վերոյ գրական-գիտական պաշարով, առանց քննադատական սիստեմի ու մէտոդի—վեր կենալ և աշխարհ արարածի առաջ մեր վիպագրողներին իսկ Սիւլիւկի Տէր Պապալին նման օխովթել որին գերեզման, որին աւագան», Գր. Արձրունուն տալ տաղանդաւոր վիպասանի մրցանակ, իսկ Մուրացանին և Փափագեանին Յօխչին նույն այգակիսի քաջագործութիւն անելու համար հարկաւոր է նախ և առաջ մեծամասութիւն, որ և ունի պ. Լէօն բաւականաչափ:

Ա.լ ևս մի քանի խօսք նոյն յօդուածի կամ յօդուածների մասին: Պ. Լէօն գիտէ, որ գրականութեան մէջ գոյութիւն ունի «գեղարուեստը-գեղարուեստի համար» կոչուած ուղղութիւնը, բայց բոլորովին սխալ է հասկանում այն: Ընդհանուր գրականութեան մէջ շատ քիչ վէպ կարելի է ցոյց տալ, որոնց կարելի լինէր այդ ուղղութեան շրջանակի մէջ տանել. ուրիշ բան է ոտանաւոր-բանաստեղծութիւնները, որոնք շատ անգամ հէնց «Գեղարուեստ են գեղարուեստի համար»<sup>1)</sup>: Պ. Լէօն կարծում է (ժես «Գեղունի», 1903 թ., էջ 51), որ եթէ մի որևէ է գրուածքի մէջ «առէնդէնցիա» (միտում) չկալ—այդ գրուածքը արդէն պատկանում է «Գեղարուեստը գեղարուեստի համար» ուղղութեան: Եւ որովհետև այդ տեսակի գրուածքները նրա կարծիքով անպէտք են, ուրեմն ամեն մի իսկական գեղարուեստական գրուածքը պէտք է տէնդէնսիօղ լինի: Բայց ինչ է տէնդէնցիան, հարցնում է Լէօն և պատասխանում այն, որ «հեղինակը գիտակցական դիտաւորութիւն, է ունենում ընթերցողի մէջ մի յայտնի միտք զարթեցնել, մի յայտնի զգացմունք շարժել և գրանով հասնել մի յայտնի նպատակի»: Եթէ ընդունենք այդ որոշումը, հազիւ թէ կգտնուի մի վէպ, որ տէնդէնսիօղ չլինի, որովհետև այն վէպը, որ ոչ միտք է զարթեցնում ոչ

<sup>1)</sup> Օրինակ Քրանսիացի «Պառնասսական» կոչուող բանաստեղծների, ուուս բանաստեղծ Ֆէտի, Ալ. Տօլստոյի և այլոց բազմաթիւ ոտանաւորները:

էլ զգացմունք շարժում — վէպ չէ։ Ուրեմն ինչ վէպ էք որ առնենք, որը մեր մտքին որոշ ուղղութիւն է տալիս, մեր զգացմունքները շարժում է որոշ կերպով — տէնդէնսիօզ է։ Սակայն միթէ և. Տօլստօլի Աննա Կարէնինան տէնդէնսիօզ վէպ է։ կամ միթէ Մոպասանի «Մահուան նման ուժեղ» վէպը տէնդէնսիօզ է։ Բնաւ և երբէք։ Դրանք ամենակենդանի կետնքի պատկերներ են և գրուած են այն աստիճանի պատկերօրէն և զեղարուեստական չափով, որ ընթերցողը իսկոյն սկսում է օրոշ զատողութիւններ անել այս կամ այն դէպքի մասին, համակրել այս կամ այն անձնաւորութեանը։ Ոչ Տուրքեներ, ոչ էլ Մոպասանը քարոզիչներ են կամ հրապարակախօսներ։ Նրանք գեղարուեստագէտներ են և ուսուցանում են մեզ պատկերացներով մեր առաջ կեանքը, մարդուս ոգին, մտքերը և զգացմունքները։ Եւ ի հարկէ պ. Լէօն չի ասիլ, որ ալդ երկու վիպասանները առհասարակ էլ տէնդէնսիօզ են և կամ տէնդէնսիօզ չինելուն պատճառով արժէք չունին։ Մինչդեռ Շիրվանզադէի մասին նա ասում է ալդ։ Լէօլի կարծիքով «Շիրվանզադէն իբրև վիպագրող երկրպագում է «Գեղարուեստը գեղարուեստի համար» նշանաբանին։ Սակայն միթէ կարելի է ասել, որ «Օրիորդ Լիզալի», «Խնամատար»-ի, «Հրդէհ» ի, «Կրակ»-ի, «Ալրսէն Դիմաքսեանի», «Քաօս»-ի հեղինակը «Գիտակցական դիտաւորութիւն» չունի ընթերցողի մտքին և զգացմունքին որոշ ուղղութիւն տալու... Ակներև է, որ ալդ չի կարելի ասել Շիրվանզադէի մասին, քանի որ լիշեալ վւալերից մի քանիսը աշկարայ տէնդէնսիօզ են։ Ոչ, պ. Լէօն Զեր տուած որոշումը տէնդէնցիալի մասին սխալ է. ալդ որոշումով ամեն մի վէպ տէնդէնսիօզ է։ Մեր կարծիքով տէնդէնսիօզ պէտք է կոչել այն գրուածքը, որը գրուած է յատկապէս որոշ գաղտիար արձարծելու կամ պաշտպանելու համար <sup>1)</sup>։

1) Մի ոռւագննադատ — անգլիացի քննադատ Մէտցի. Արնոլդի գաղափարների մասին խօսելիս իրաւացի նկատում է, «որ հարկաւոր է զանազանել գիտակից տէնդէնցիան գիդէալի» տէնդէնցիայից։ Փաստի տէնդէնցիան է, երբ հեղինակը պաշտպա-

Այդ գէպքում գրուածքի ալժէքը չափում է նրանով  
թէ որ աստիճանի նա միակողմանի չէ և թէ ինչ գա-  
ղափար է պաշտպանում։ Եթէ հեղինակը տաղանդաւոր  
է, զարգացած մարդ է, լուսամիտ գաղափարների տէր,  
բարի զգացմունքներով օժտուած — նրա գրուածքը որ-  
քան էլ տէնգէնսիօգ լինեն — այնուամենախիւ բարձր  
կդասուին իբրև գեղարուեստական մի ստեղծագործու-  
թիւն։ Օրինակ Իբսէնը և նրա գրուածքները, Եւ ընդ-  
հակառակը, փոքրիկ տաղանդի տէր կամ փշացած հեղի-  
նակը կարող է տալ միայն անհամ կամ անպիտան, վե-  
րացական կամ պարսաւական գրուածք։ Ուստի հարկ  
էլ չկալ ամեն մի հեղինակից պահանջել որ նա տէն-  
գէնսիօգ լինի. ընդհակառակը - թող նա տէնդէնսիօգ  
չլինի, թէ չէ եթէ մի փոքր տաղանդի նման բան ու-  
նի — այն էլ կկորցնի. Կրկին ուրեի հարց է թէ հասարա-  
կօրէն այս կամ այն հեղինակը, իր այս կամ այն գըր-  
ուածքով ինչ զգացմունքներ է շարժում ընթերցողների  
մէջ, ինչ տեսակ նրանց ուղղութիւն է տալիս. որ չա-  
փով նա լայնացնում է մեր մտաւոր հորիզոնը, մեր  
մտքերին ինչ ուղղութիւն է տալիս. վերջապէս ինչ ար-  
ժէք ունի հեղինակի իդէալը։ Պ. Լէօն այս հարցի վճռ-  
ման մէջ էլ ընկնում է միակողմանիութեան մէջ և պա-  
հանջում է, որ հեղինակը անպատճառ հասարակական  
խնդիրներ արժարծէ, անպատճառ հասարակական գա-  
ղափարների ընդհարումների վերայ հիմնէ իր վէպը։  
Ինչու, ինչ հարկ կալ ալդ տեսակ միակողմանութիւն  
քարոզել, Վիպասանը կեանքի նկարիչ է. բայց միթէ  
կեանքը միմիայն հասարակական խնդիրների շուրջն է։  
Ապա մարդը, նրա «ես»ը, ներքին կեանքը, կատարե-  
լագործութիւնը, նրա ուշը, ընտանեկան կեանքը և  
ալլն և ալլն — անհատի ալդ անձնական կեանքը միթէ  
վէպի նիւթ կարող չեն լինել. Ի՞նչ է Գէօթէի «Վեր-  
գերը» վէպ չէ ինչ է, թէ վատ վէպ է միայն այն

---

նում է ներկան, իրականութիւնը. իդէալի տէնդէնցիան — երբ  
նա պաշտպանում է ցանկալի ապագան, այն որ չկայ, բայց  
որը ցանկալի է որ լինէր։

պատճառով, որ նա ալբից սկսած մինչև և—օ—Փ—խօսում է անհատի մասին, նրա զգացմունքների և մասնաւորապէս նրա սիրոյ մասին։ Պ. Լէօն գուցէ լըսած կլինի, որ՝ Փրանսիացի վիպասան Մէրիմէն ունի գրած «Կարմէն» անունով մի վէպ, որից վերցրած է և այդ անունը կրող օպերալի լիբրէտոն։ Մէրիմէի ալդ վէպը խօսում է միմիայն սիրոյ մասին և այդ հօղի վերայ տեղի ունեցած բնաւորութիւնների ընդհարման մասին։ ուրիշ ոչինչ, Բայց տեսէք թէ ինչ սիրուն վէպ է (տես Գիւլօհ գրուածքը գեղարուեստի մասին)։ Ալնպէս որ հարկ չկալ մեղադրելու Նիրվանզագէին կամ ուրիշին, որ նրանց վէպերի հիմնաքարը սէրն է, սիրոյ զգացմունքն է։ շատ էլ լաւ է, որ ալդպէս է, թէ չէ դա չէր լինի վէպ, այլ մի ուրիշ բան՝ առաջնորդող յօդուած, քննադատութիւնն, զիտական յօդուած և ալլն։ Ի հարկէ «առ ի չգոյէ լաւագունի» Լէօի յօդուածը էլի մի բան է. բայց ցաւն էլ հէնց նրանումն է, որ նա պէտք է սխալ գաղափար տարածէ մեր արդի գրակոնութեան մասին և չէ լինելու մի ուրիշ գըրուածք, որ ցըկը նրա միակողմանի, շատ անգամ միտումական դատողութիւնները և վճիռները այս ու այն գըրուածքի, այս ու այն հեղինակի մասին։

Վերջերս մի նոր երև ոյմէ է նկատուում. սկսել են հրատարակել մեր հեղինակների, մասնաւորապէս վիպասանների, երկերի ժողովածուները Արօվեանինը հրատարակուած է, Ռ. Պատկանեանը նոյնպէս, իսկ նրա երրորդ հատորը մամուլի տակ է. նոյնպէս մամուլի տակ է և Մ. Նալբանդեանի երկերի երկու հատորները Շաֆֆիինը լոյս են տեսնում մաս-մաս. ինչպէս և Պ. Պոօշեանինը. լոյս են տեսած նոյնպէս Ծերենցի (վազուց), Պուրեանի և Պարսնեանի գրուածքների ժողովածուները. տպում է. Փարիզում Պէշիկթաշլեանինը։ Լոյս տեսան Նիրվանզադէի երկերի երեք հատորները. բաժանորդագրութիւն է բացուած Մուրացանի երկերի լիակատար հրատարակութեան։ Պարսկաստանում տըպւում են Ատրպերի երկերի ժողովածուները։ Հրատարակուած են նոյնպէս Աղայեանի, Ճուղուրեանի, Ահա-

ըոնեանի, Շանթի և մի քանի այլ երիտասարդ .վիպասանների և բանաստեղծների երկերը, Յանկալի է, որ հրատարակուէին նոյնպէս Փափազեանի, Նար-Դոսի և Պղապեանի երկերի ժողովածուները Եւ եթէ քրականութեան և ընթերցողների բաղդից ալժմ երևան գալ մի օրինաւոր քննազատ, նա կարող կլինի հեշտութեամբ տալ «զկալսերն կայսեր, և զԱստուծոյն—Աստուծոյ»: Ժամանակ է արդէն կազմել XIX-րդ դարու մեր գրականութեան պատմութիւնը և տարածել ալն ժողովրդի մէջ՝ անցեալի և ներկայի միջև ամուր կապ հաստատելու համար:

ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԻՆ

---